«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,

ոստիկանության գեներալ-մայոր

_____ Մ.Ա.Բաբայան

«------»----------2019թ.

Կանոնակարգ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի խորհրդի

1. Ընդհանուր դրույթներ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) ուսումնական կենտրոնի պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է ուսումնական կենտրոնի պետը:
2. Խորհրդի ձևավորման կազմը, կարգը և կանոնակարգը սահմանվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) պետի հրամանով՝ ուսումնական կենտրոնի պետի ներկայացմամբ:
3. ՈՒսումնական կենտրոնի խորհուրդը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գործող ներքին և այլ իրավական ակտերով:
4. Խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

2. Խորհրդի լիազորությունները

5. Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում կրթահամալիրի խորհրդին՝ նախնական մասնագիտական կրթության չափորոշիչում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:
6. Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում կրթահամալիրի խորհրդին՝ կրթահամալիրի կանոնադրության, կրթահամալիրի ուսումնական գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերի, դրանց մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի վերաբերյալ:
7. Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում կրթահամալիրի պետին՝ ուսումնական կենտրոնի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

8. Քննարկում է յուրաքանչյուր ուսումնական խմբի սովորողներից խորհրդի անդամ ընտրելու հարցը:

9. Քննարկում է ուսումնական կենտրոնի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հարցերը:

10. Քննարկում և կրթահամալիրի պետի հաստատմանն է ներկայացնում ուսումնական կենտրոնի սովորողների պրակտիկայի ծրագրերը:

11. Քննարկում է ուսումնական կենտրոնի ուսումնական պլանները և ծրագրերը:

12. Քննարկում է ուսումնական կենտրոնի սովորողների ընթացիկ առաջադիմությունը, քննաշրջանի արդյունքները, ամփոփում է մասնագիտական պրակտիկայի արդյունքները ըստ ուսումնական խմբերի:

13. Քննարկում է ուսումնական կենտրոնի տարեկան հաշվետվությունը:

14. Քննարկում է խորհրդի կազմի փոփոխության հարցերը և համապատասխան առաջարկությամբ դիմում խորհրդի նախագահին:

15. Խորհրդի նիստերը բաց են և անցկացվում են սույն կանոնակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել կրթահամալիրի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ:

3. Խորհրդի նախագահը

16. Խորհրդի նախագահը ուսումնական կենտրոնի պետն է: Նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը նախագահում է ուսումնական կենտրոնի պետի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում ուսումնական կենտրոնի պետի կողմից լիազորված որևէ անդամ:

17. Խորհրդի նախագահը որոշում է խորհրդի նիստի անցկացման վայրը, ժամկետը, հրավիրում է խորհրդի արտահերթ նիստ, հաստատում է խորհրդի օրակարգը, ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունը, խորհրդի առաջարկության հիման վրա, խորհրդի կազմի փոփոխության միջնորդությամբ, դիմում է կրթահամալիրի պետին:

4. Խորհրդի քարտուղարը

18. Խորհրդի քարտուղարը օժտված է խորհրդի անդամի իրավունքներով:

19. Խորհրդի քարտուղարը կազմում, ստորագրում և խորհրդի նախագահի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը, խորհրդի հերթական նիստից առնվազն երկու օր, իսկ արտահերթ նիստից մեկ օր առաջ նիստի վայրի, օրվա և օրակարգի մասին տեղեկացնում է խորհրդի անդամներին, կազմում, ստորագրում և պահպանում է խորհրդի արձանագրությունները:

5. Խորհրդի անդամների իրավունքները

20. Խորհրդի անդամը իրավունք ունի՝ խորհրդի քարտուղարից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, խորհրդի իրավասության սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել հարցերի քննարկում և առաջարկություններ ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ, խորհրդի նիստի ժամանակ հարցեր տալ զեկուցողին և հանդես գալ զեկույցով:

6. Խորհրդի անդամների պարտականությունները

21. Խորհրդի անդամը պարտավոր է՝ մասնակցել խորհրդի հերթական և արտահերթ նիստին, նիստերին մասնակցելու անհրաժեշտության դեպքում նախապես տեղեկացնել խորհրդի քարտուղարին՝ հայտնելով չներկայանալու պատճառները, կատարել խորհրդի որոշումները և խորհրդի նախագահի հանձնարարությունները, խորհրդի նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել իր վերջնական դիրքորոշումը՝ քվեարկության միջոցով:

7. Խորհրդի աշխատակարգը

22. Խորհրդի գործունեությունը իրականացվում է խորհրդի հերթական կամ արտահերթ նիստի միջոցով:

23.Խորհրդի հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր ուսումնական խմբի ձևավորման ժամանակ, իսկ այլ հարցերով նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

24.Հրատապ հարցերի քննարկման համար արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի նախագահի կողմից կամ խորհրդի անդամների թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ:

25.Խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան ներկա է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

26.Խորհրդի նիստին մասնակցելու համար կարող են հրավիրվել կրթահամալիրի այլ աշխատակիցներ, եթե նրանք առնչություն ունեն քննարկվող հարցի հետ՝ առանց ձայնի իրավունքի:

27.Խորհրդի նիստը կարող է հետաձգվել քվեարկության միջոցով՝ նիստի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28.Օրակարգային հարցի քննարկումը սկսվում է խորհրդի քարտուղարի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հարցը նախապատրաստող անձի զեկույցով:

29.Օրակարգի հարցը կարող է հետ վերցվել այն ներկայացնող անձի կողմից, որի դեպքում այն չի քննարկվում:

30. Քննարկվող հարցի վերաբերյալ խորհրդի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի ներկա անդամների ձայնի պարզ մեծամասնությամբ: Նախագահողը բարձրաձայն հայտարարում է քվեարկության արդյունքները՝ շեշտելով առաջարկության ընդունումը կամ մերժումը: Խորհրդի անդամը

քննարկվող հարցի վերաբերյալ իր վերջնական որոշումն է արտահայտում «կողմ» կամ «դեմ» ձևերով:

31. Խորհրդի նիստը արձանագրվում է, արձանագրությունը ստորագրվում է խորհրդի նախագահի և խորհրդի քարտուղարի կողմից:

32.Եթե հարցի քննարկման արդյունքում պարզվում է, որ այն բավարար չափով չի նախապատրաստվել, ապա խորհուրդը քվեարկությամբ տվյալ հարցի քննարկումը հետաձգում է մինչև դրա բավարար նախապատրաստումը:

33. Խորհրդի որոշումները ուժի մեջ են մտնում խորհրդի նախագահի և խորհրդի քարտուղարի ստորագրելուց հետո:

8. Եզրափակիչ դրույթներ

34.Սույն կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կրթահամալիրի պետի հրամանով՝ խորհրդի միջնորդությամբ:

35. Խորհրդի գործունեությունը նրա լիազորությունների ժամկետում կարող է դադարեցվել խորհրդի գոյությունը բացառող օրենսդրական փոփոխությունների կամ ուսումնական կենտրոնի լուծարման դեպքում: